«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ստեղծագործական երևակայությունը որպես կապակցված խոսքի ուսուցման մեթոդ
ԱՌԱՐԿԱ	Դասվար
ՀԵՂԻՆԱԿ	Կ.Ահարոնյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի Պ.Սևակի անվան N 8 հիմն. դպրոց

Բովանդակություն

1.Ներածություն

2.1 Ստեղծագործական երևակայությունը որպես կապակցված խոսքի ուսուցման մեթոդ

2.2 <<Քաջ Նազար>> հեքիաթը աշակերտներիս երևակայությամբ

2.3 Փոքրիկ բեմադրություն դասարանում <<Քաջ Նազար>> հեքիաթի մոտիվներով /հատված/

3. Եզրակացություն

4.Օգտագործված գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովորաբար մարդկային կյանքը միշտ հավերժական ընթացքի մեջ է: Երևակայությունը ևս սահման չունի: Մարդկային միտքը ծնվում է ինքնաբերաբար, ուր պարզ երևում է նրա գեղեցիկ , ազնիվ, անկեղծ, ինքնատիպ երևակայական կապակցված խոսքի մաքրությունը:

Իրականում երևակայությունը ստեղծագործելու առաջնային հիմքն է: Աշակերտի համար աշխարհը ներկայանում է երևակայությամբ հորինված պատկերացումների ու կերպարների ձևով, որոնք փաստորեն գոյություն չունեն, բայց ապրում են: Նման դեպքերում աշակերտը մեծ հաճույքով կապկցված խոսք է կառուցում, ընդգծելով՝ իր անհատականությունը, մոտեցումը: Խոսելիս կամ գրածը վերարտադրելիս անպայման աշակերտը հենվում է իր երևակայության, մտքի ճկունության ու կապակցված խոսք կառուցելու գործընթացի վրա:

Ստեղծագործական երևակայությունը՝ որպես կապակցված խոսքի ուսուցման միջոց, միշտ էլ հետաքրքրել է մանկավարժներին: Դեռևս սկսած վերածննդի ժամանակաշրջանից, գիտականորեն հիմնավորել են կապակցված երևակայական խոսքի կարևորությունը:

Ինչպես գիտենք, միայն մարդուն է բնությունից տրված բանականությունն ու խոսքը, որով և տարբերվում է կենդանիներից: Նշենք նաև, որ կապակցված խոսքը հնարավորություն է ստեղծում ի հայտ բերել վերաբերմունք՝ կյանքի, բնությսան, շրջապատի նկատմամբ:

Աշակերտների ստեղծագործական ունակությունները զարգացնելու և դրանք աշխատանքի ընթացքում խելամիտ օգտագործելու նպատակով մեծ և լուրջ ուշադրություն է պահանջում, որ արդիականացնելով ստեղծածն ու արդյունավետ կերպով օգտագործելով ստեղծագործական գործընթացը, և ընդլայնելով նրա շրջանակները , ավելի հետաքրքիր ու բազմաբնույթ է դարձնում դասապրոցեսը: Ստեղծագործական կարողությունների ձևավորումը ոչ միայն մտածողությունն է զարգացնում ,այլև մեծացնում է կյանքը սիրելու, շրջապատի աշխարհը լայնորեն ընկալելու, հուզական երանգավորումը մեծացնելու , գեղեցկացնելու այդ նվիրական երևակայությունը , որ կուտակված է կրտսեր դպրոցականի հոգու խորքում:

Ինչպես մեծ մանկավարժ Մակարենկոն է գրել.<<Մարդը չի դաստիարակվում մաս առ մաս։ Նա ստեղծվում է այն բոլոր ազդեցությունների գումարի համադրումով, որոնց ենթարկվում է>>։ Չէ՞ որ ուսուցիչը կրտսեր դպրոցականի ավագ ընկերն է։ Այդ իսկ պատճառով ուսուցումը պետք է դառնա հաճույք նրա համար ու նպաստի նրա զարգացմանը։ Լսելով աշակերտների ստեղծագործական խոսքը, պարզորոշ տեսնում ես նրա ներաշխարհը, նրա գեղեցիկ խոսքը, խոսքի յուրօրինակությունը, որոնք կարծես <<զգեստավորում>> են մտքերը։ Կարևոր է , որ երևակայական, ստեղծագործական կապակցված միտքը համադրվի խոհերով ու դատողություններով։ Այստեղից էլ երևում է աշակերտի զգացածն ու հասկացածը, ընդգծելով նրա անհատականությունը , ընկալման խոր ներաշխարհը։

Աշխատանքի խնդիրներն են՝

- Ինչպե՞ս է ստեղծագործական երևակայությունը ազդում կապակցված խոսք կառուցելու գործընթացի վրա
- Մտքի և խոսքի ստեղծագործական զուգորդումը ինչպե՞ս է վերածվում ստեղծագործական երևակայական կապակցված խոսքի
- Ինչպե՞ս բացահայտել ստեղծագործական երևակայությունը զարգացնող մեթոդներ
- Ինչպե՞ս է երևակայությունը բարձրացնում ուսման որակն ու արդյունավետությունը, խթանում աշակերտների հետաքրքրասիրության շրջանակը լայանցնելուն
- **Աշխատանքի նպատակներն են՝**
- Բարձրացնել սովորելու մոտիվացիան
- Նպաստել աշակերտների կարողությունների խթանմանը
- Աշակերտների մեջ հետաքրքրություն առաջացնել ստեղծագործական երևակայության շուրջ
- Զարգացնել աշակերտների բառապաշարը

- Բարձրացնել գիտելիքների որակը, ստացած գիտելիքները վերլուծել և ամփոփել կապակցված խոսքով:

2.1 Ստեղծագործական երևակայությունը որպես կապակցված խոսքի ուսուցման մեթոդ

Եթե ֆանտազիային այնպես տիրապետենք,

ինչպես տրամաբանությանը, ապա հորինելու՝

երևակայելու արվեստը կբացահայտվեր:

Նովալիս

Այս միտքը խիստ կարևոր է՝ երեխային հորինել սովորեցնելու առումով: Երբ աշխատում ենք երեխաների հետ՝ շեշտադրելով նրա երևակայության զարգացումը՝ ապշեցուցիչ, անգամ զվարճալի գյուտերի ենք հանդիպում: Անգամ երեխան ինքն է զարմանում, թե ինչպես ծնվեց այդպիսի պատկեր կամ պատմություն: Միասին երևակայելու և պատկերացնելու արդյունքում ծնունդ են առնում այնպիսի հեքիաթներ, պատմություններ,որոնք թաքնված են մարդու ենթագիտակցության խորքերում: Սա մի անբացատրելի, բայց և ստեղծագործական հրաշք է, որտեղ միախառնվում են հեքիաթն ու իրականությունը: Մենք պարտավորված ենք երեխաներին սովորեցնել, վարժեցնել ստեղծագործական աշխատանքի մանրամասներին, ինչու չէ՝ երևակայական գաղտնիքներին: Յուրաքանչյուր երեխա ունի երևակայելու, ստեղծագործելու ունակություն: Միայն պետք է երեխային մղել երևակայելու, պատկերացնելու և մտքում ծնված պատկերները բառերով արտահայտելու հնարավորություն: Սա երեխայի անհատականությունն ընդգծելու, ինչպես նաև կապակցված խոսքի ուսուցման արդյունավետ միջոց է: Ըստ իս՝ հնարավորություն է՝ խորությամբ և խիզախորեն արտահայտել մտքերը, անգամ եթե այդ մտքերը զվարճալի ու զավեշտալի են, թեկուզ եթե սխալ լինի: Ինչպես գիտեք, ցանկացած հեքիաթի ուսուցումը կարող է դառնալ ինքնուրույն կապակցված խոսքի դրսևորման աղբյուր: Երևակայությունն աննման ծառայություն է մատուցում, այսինքն՝

երեխաներին հնարավորություն է տալիս հեքիաթի մեջ նոր կողմեր տեսնելու և նոր մանրամասներ հորինելու համար:

Երևակայությունը մարդու հոգեկանի յուրահատուկ կողմն է: Այն առանձնանում է հոգեկան այլ գործընթացներից, բայց միաժամանակ միջակա դիրք է գրավում ընկալման, մտածողության և հիշողության միջև: Երևակայությունը բնորոշ է միայն մարդուն: Դրա շնորհիվ է մարդը ստեղծագործում, պլանավորում և վարում իր գործունեությունը: Թե՛ նյութական, թե՛ հոգևոր մշակույթը մարդու երևակայության և ստեղծագործության արդյունքն են: Այն մարդուն հիշեցնում է անցյալը և ուղիներ բացում ապագայի համար: Ունենալով հարուստ երևակայություն՝ մարդը կարող է «ապրել» տարբեր ժամանակներում: Երևակայությունը իրականությունն արտացոլող պատկերների փոխակերպման գործընթաց է և այդ պատկերացումների հիման վրա նոր պատկերացումների ստեղծումն է:

Այսպիսով երևակայությունը հիշողության մեջ կուտակված մտապատկերների հետ կատարվող իմացական գործընթաց է, որի շնորհիվ ստացվում են որակապես նոր պատկերներ կամ հիշողության մտապատկերների նոր, ինքնատիպ զուգորդություններ:

Երևակայությունը նաև անվանում են երևակայելու ընդունակություն, նոր պատկերներ և զգացողություններ ձևավորելու կարողությունն է:Երևակայությունը գիտելիքները դարձնում է կիրառելի խնդիրներ լուծելու ժամանակ և կարևոր է փորձ ձեռք բերելու և սովորելու գործընթացի համար ։ Երևակայությունը զարգացնելու հիմնական միջոց է հանդիսանում պատմություններ լսելը, որտեղ ընտրված բառի ճշգրտությունը կարևոր գործոն է "հորինված աշխարհների" համար ։ Երևակայությունը "թաքնված" պատկերների կամ զգացողությունների ձևավորում է, որոնք տեղի են ունենում առանց որևէ մեկի իմացության։ Անհատը կարող է երևակայել՝ ըստ տրամադրության, որը կարող է լավ կամ վատ լինել՝ կախված իրավիճակից։ Որոշ մարդիկ երևակայում են, որպեսզի դուրս գան լարվածությունից կամ մռայլ տրամադրությունից։

Ժան Պիաժեն պնդում էր, որ ընկալումները կախված են անձի աշխարհայացքից։ Աշխարհայացքը երևակայության կողմից ընկալումների կազմակերպումն է գոյություն ունեցող պատկերների մեջ։Աշխարհը տվյալների մեկնաբանությունն է, որոնք փոխանցվում են զգայարանների կողմից։ Նրանք, ովքեր ընդունում են շատ տեղեկություններ , ավելի մեծ երևակայություն ունեն։

Երևակայական ստեղծագործությանը կարևորություն են տալիս ոչ միայն հոգեբանները, այլև հենց իրենք՝ աշակերտները։ Նրանք նախապատվություն են տալիս այն մանկավարժին , որն իր հնարամտությամբ և մտքի ստեղծագործականությամբ արթնացնում են աշակերտների ստեղծագործական երևակայությունը։ Այդ իսկ պատճառով ստեղծագործականությամբ օժտված աշակերտներին չեն գրավում քարացած ավանդական մոտեցումներով դասերը։ Հարկավոր է նրանց ստեղծագործական մտքի թռիչքն անընդհատ շարժման մեջ պահել։ Ապացուցված է, որ այսօրվա աշակերտը հակված չէ շաբլոն մտածողության։ Ուստի ուսուցիչը պարտավոր է ստեղծագործաբար մոտենա յուրաքանչյուր դասին։ Ես հենց այդպես լ անում եմ։ Յուրաքանչյուր դաս վեր եմ ածում ստեղծագործական երևակայական միջավայրի, ուր ի հայտ են գալիս պատմություններ՝ աներևակայելի, համով, հոտով , ծիծաղելի, անկեղծ, անգամ՝ անսպասելի ։ Դա կախված է նաև այն բանից, թե ինչպես են իրադարձությունները ներազդել աշակերտների հոգեկան աշխարհի վրա։ Ասենք, աշակերտը առանց դժվարության համապատասխան անուն է տալիս իր երևակայության մեջ ստեղծված պատմությանը և կապակցված խոսքով վերարտադրում այն։ Սակայն, հանդիպում ենք նաև այնպիսի աշակերտի, որը ներկայացնում է իր երևակայական պատմությունը ոչ կապակցված խոսքով։ Նման դեպքերում շտկվում են յուրաքանչյուր սխալ , յուրաքանչյուր բացթողում, և երևակայությունը երբեմն էլ հասնում է իր գագաթնակետին։ Վերջին հաշվով, հիմնախնդրի էությունն այն է, թե իրերն ու առարկաները, եղելություններն ու իրադարձությունները, ինչ ծավալով են ընդգրկվել մտահորիզոնում , և ինչպես է մտահորիզոնն այդ ամենին արձագանքել ։

Ստեղծագործական երևակայության զարգացման պայմանների ապահովումը կարելի է կատարել նաև խաղիկների միջոցով, դերային խաղերով, ինչու՞ չէ , նաև՝ մնջախաղով, ֆիլմերի դիտումով։ Ստեղծագործական,դերային խաղերի բովանդակությունն ինքնանպատակ չէ,այն արտացոլում է իրականության մեջ գոյություն ունեցող հարաբերությունները։ Խաղի նշանակությունը մեծապես կարևորվում է աշխարհը ճանաչելու և ստացած տպավորություններն ավելի լավ ու խորությամբ յուրացնելու առումով։ Այսպիսի խաղերի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ կարող են իրենք ստեղծել խաղը՝ ստեղծագործաբար երևակայելով ։ Աշակերտների երևակայությամբ ստեղծածը իրական է շատ,

գործողությունները՝ ճշմարիտ, իսկ զգացածն ու ապրումները, զգացմունքներն ու երևակայությամբ հորինածը՝ խաղ, որը շատ հոգեմոտ ու հոգեհարազատ է։

<<Աշակերտը հաստատապես յուրացնում է միայն այն ժամանակ, երբ նա մտածում է։ Խորհենք այն մասին, թե ինչպես մտածողության , վերլուծության, զննման առարկա դարձնել այն, ինչն ուսումնասիրվում է տվյալ պահին կամ շուտով կուսումնասիրվի >> /Սուխոմլինսկի /։ 1. Խոսքի զարգացումն է, որն ուղղակիորեն կապված է մտածողության զարգացման հետ։

2. Երևակայության մտահորիզոնի զարգացում, որը կախված է աշակերտի ընկալունակությունից, թե որքանով է ընկալել տվյալ նյութը։

3. Վիճահարույց խնդիրները հեշտությամբ լուծելու, վերարտադրելու, կապակցված խոսքով արտահայտելու գործընթացի զարգացում

Խոսքի զարգացման նպատակով ուսուցիչը պետք է հատուկ ուշադրություն դարձնի հանգուցային հարցադրումներին և անպայման երեխաներին ներգրավի խոսակցության մեջ, նրանց հնարավորություն ընձեռի պատմել իրենց կողմից կատարված աշխատանքի մասին՝ կապակցված խոսքով, այլ ոչ թե՝ անկապ։

2. 2 <<Քաջ Նազար>> հեքիաթը աշակերտներիս երևակայությամբ

Նոր էինք ,,Քաջ Նազար՛՛ հեքիաթը սովորել:

Ամբողջական տեքստը կարդալուց հետո ասացի.,, Իսկ ի՞նչ կլիներ, եթե Քաջ Նազարը հայտնվեր Երևանում, մեր քաղաքում՝ Հրազդանում, կամ հենց մեր դասարանում, կամ էլ լիներ հեռուստատեսության ստուդիայում: Միայն տեսնեիք երեխաների ոգևորությունը: Իրար հերթ չտալով՝/ամեն մեկն ուզում էր ինքը առաջինը պատմել իր երևակայությունը/ խոսում էին անկաշկանդ, այնպիսի երևակայությամբ, կարծես թե իրենք էին Քաջ Նազարը:

Այսպես.

...Քաջ Նազարը հպարտ կեցվածքով եկավ Հրազդան: Մարդկանց վերևից էր նայում: Զարմանում էր, որ մարդիկ ավտոմեքենաներով են շրջում: Իսկ ինքը նստած թագավորական գահաթոռին, ծառաներով էր շրջում: Նա քթի տակ մրմնջում էր.,,...Էս մարդիկ շատ տխուր են, պետք է սրանց զվարճացնել,բայց ինչպե՞ս .

Հրամայում է բերել մի վագր, որ հեծնի վագրին ու զվարճացնի մարդկանց, որ մարդիկ այլևս տխուր չլինեն, անընդհատ ծիծաղեն: Բայց հակառակ սպասածի՝ հենց վագրին տեսնում է, վախից լեղին ջուր է դառնում... այնպես է փախչում թագավորական գահաթոռակից, որ ,,գյուլլեն՛՛ գցես, հետևից չի հասնի:

Երևակայությունը... շարունակվում է Երևան քաղաքում:

...Քաջ Նազարը , իր կնոջ՝ յոթ հսկաների միակ քրոջ հետ, հայտնվում է Երևան քաղաքում: Կառավարական շենքի մոտ մի խումբ երիտասարդներ նստած են շենքի աստիճաններին և մի պլակատ են պահել իրենց գլխավերևում. ,, Արդարություն ենք պահանջում՛՛:

-Ար – դա –րու –թյուն, -մի կերպ կարդում է արդարություն բառը,իսկ մնացած մասը չի կարողանում կարդալ: Կարդացածից շշմած հարցական,սարսափած աչքերով, նայում է

կնոջը: Կինը տեսնելով այս ամեը՝ ոգևորված ասում է.

-Չե՞ս տեսնում,որ մարդիկ իրենց թագավորին էնքան են սիրում, որ ասում են. ,, Ոչ ուտենք,ոչ խմենք, մենակ մեր թագավորի երեսին մտիկ անենք ու կշտանանք՛՛:

Քաջ Նազարը նախանձում է մեր թագավորին: Անմիջապես հրամայում է գնալ իր երկիրը, ուր իր արևով են երդվում, իրեն պաշտում:

Երևակայության այսպիսի խաղերը ծնունդ են տալիս նոր հեքիաթների:

Այս անգամ Քաջ Նազարը հայտնվում է Հայկական Հեռուստատեսության ստուդիայում:

Չտեսի պես նայում է չորս կողմը: Ամեն ինչ իր համար անծանոթ ու չտեսնված էր: Հենց մոտեցնում են միկրոֆոնը, վախից հետ- հետ է փախչում: Բռնում են Նազարին, նստեցնում բազմոցին, որ խոսի իր քաջագործություններից, մարդկանց պատմի իր բախտի ու թագավոր դառնալու մասին: Հանկարծ լսվում է երաժշտությունը.

-Աշխարհը իմն է, աշխարհը իմն է, իմն է,

Աշխարհի արծաթն ու ոսկին իմն է, իմն է,

Ամեն մարդու բախտը էս աշխարհի մեջ

Չի կարող լինել Նազարի հարստության հետ:

Երեխաները ավելի ոգևորված հարցնում են, իսկ եթե հարբած լինի Քաջ Նազարը, ին՞չ կլինի: Երեխաները մտածում են ու հորինում բարձրաձայն.

Աշուն է: Այգում հասել են մրգերը, այգին արբել է աշնան բույրերից և գույներից:

Նազարը այգու դռնից ներս մտավ , թե չէ , իսկույն չտեսավարի հարձակվեց ու կերավ այգու տանձն ու խնձորը, խաղողն ու դեղձը,,սալորն ու սերկևիլը: Այնքան կերավ, որ հարբեց: Գլորվելով ծառերի տակ, զգաց, որ այգին փախչում է ոտքերի տակից:

-Կանգնիր, մի փախչիր, ես եմ՝ Նազարը, քո տերը: Քեզ էլ ինձ նման թագավոր կսարքեմ, այնպիսր թագավոր կկարգեմ,որ ամբողջ աշխարհը զարմանա: Թագավոր դառնալը բախտի բան է , բախտի...Բախտ ունես՝ քեֆ արա:Քու բախտից մի փախիր: Կանգ առ...Ու երգում է՝ ,,Վու՛յ, աման – աման, վու՛յ աման, թագավոր լինելուց լաավ բան, Կեր, խմի, քեֆ արա շարունակ,աշխարհը խալիա ոտքիդ տակ՛՛:

Բայց այնքան հարբած է լինում Քաջ Նազարը, որ խռմփացնելով քնում է՝ չիմանալով, որ ոչ թե այգին է փախչում, այլ ինքն է փախչում այգուց: Զարմացած երեխաները հարցնում են՝ մարդ միրգ ուտելով կհարբի՞... Քաջ Նազարի դեպքում՝ այո:

Աքրոստիկոս

Քաջ Նազարն եմ ես,

Ամենքին քաջ ծանոթ,

Զանք չեմ գործադրում,

Նազարին հատուկ

Առաջադրանքներ եմ կատարում

Զարկում եմ , ջարդում վախից

Անպայման դողում վագրից

Ոպեններ հետո հռչակվում:

Այսպես՝ յուրաքանչյուր ստեղծագործական երևակայություն սահման չունի: Ճիշտ է՝ զվարճալի, բայց երևակայական մտքի թռիչք, որն սկսվում է մտքի և խոսքի ստեղծագործական զուգորդումով, որը մարդուն, այս դեպքում՝ երեխային, կաղապարային մտածողությունից տանում է պատկերների անսովոր և գրավիչ, գունեղ աշխարհը: Երեխան հաստատապես յուրացնում է միայն այն ժամանակ, երբ նա մտածում է : Մտացածն արտահայտում է ազատ, առանց խոչընդոտների, անկաշկանդ:

Երեխան ունի տեսնելու, մտածելու, զգալու յուրահատուկ ունակություն: Չկա առավել անմիտ բան, քան նրա այդ ունակությունը մեր փորձով փոխարինելու փորձը:

Երևակայական կերպարից մարդ կարող է սարսափ ապրել և ունենալ նույն սրտխփոցը, որը կառաջանար իրական օբյեկտին հանդիպելուց: Եթե մեզ ասեն , որ չմտածենք <<կանաչ կապիկի>> մասին, մենք միանգամից պատկերացնելու ենք այդ կերպարը: Մեր դեպքում երևակայությունը մեզ տանում է <<Քաջ Նազար>> ստեղծագործության երևակայական աշխարհը :

2. 3 **Փոքրիկ բեմադրություն դասարանում <<Քաջ Նազար>> հեքիաթի մոտիվներով /հատված/**

Լսվում է երաժշտություն՝ ,, Վու՛յ աման- աման, վու՛յ աման,,. . .

Քաջ Նազարը երգում է.

- Վու՛յ աման- աման, վու՛յ աման,
  Թագավոր լինելուց լավ բան,
  Կե՛ր, խմի՛, քեֆ արա, Նազար ջան
  Աշխարհը խալի ա ոտքիդ տակ. . .

Հայացքով փնտրում է Ուստիանին։

- Ուստիա՛ն, Ուստիա՛ն, քեզ հետ չե՞մ. . .
  Ի՛նչ քարվան կտրելու գիշեր է՛ . . . Ասում եմ քարվանը չկտրե՞նք, հետներս տանենք։
  Գրքեր կլինեն, զարդեր, ոսկի. . . Պետք կգա էլի՛, ամեն ինչ էլ կունենանք։

-Ի՛հ, հողեմ քո անբան գլուխը, ամենամեծ գանձը ստեղա, որ ստեղումդ չկա / ցույց է տալիս գլուխը/։ Տո՛, որ էդ գրքերը բերես, բա՞ն պիտի ավելանա. . . Ինչքան էլ ուզենաս կարդաս, միայն ու տառը կսովորես,որովհետև Ուստրանից բացի, ուրիշ ոչ ոք, քեզ բանի տեղ չի դնի։ Ախր , դու հեչ բան ես է՛. . .

- Ա՛յ կնիկ, էդ որն ա՞. . . / մտածում է ձեռքը գլխին դրած, մի ձեռքով էլ գլուխը քորում է/

Իա՛, Ուստիան ջան, բա եղա՞վ, բա Քաջ Նազարը մեռած ա՞. . . / Բարձրացնում է դրոշակը ու կարդում գրածը/։

-Անհաղթ հերոս Քաջ Նազար,

-Որ մին զարկի, ջարդի հազար. . .

Ուստիանը ծաղրելով կարդում է.

-Չէ՛ մի, պա՛հ-պա՛հ-պա՛հ. . .

Անհաղթ հերոս Քաջ Նազար,

Որ մին զարկի՛, ջարդի՛ հազար. . .

Չէ՛,մի չէ, թան էլ չէ՛ ,բրդած մածուն. . .

Ա՛յ, հողեմ քու անբան ու պարծենկոտ գլուխը, տառերը սովորեիր,որ անգրագետ չմայիր։ Գրքե՞ր ես ուզում, հա՛- հա՛-հա՛. . . / քահ- քահ ծիծաղում է/։

- Ա՛յ կնիկ, էդ ինչ ես ասում, բա եղա՞վ, բա ես անգրագետ ե՞մ. . . /մտածում է/ ։
- Ես թագավոր եմ,թագավոր,
- Աշխարհին տեր ու զորավո՛ր. . .

Ուստիանը ավելով խփում է Նազարին ու ասում.

- Ա՛յ սուտի թագավոր, արի, արի կանգնի, որ գիտելիքը գլուխդ լցնեմ, ամեն անգամ բախտդ հո՞ չի բերելու, որ դառնաս թագավոր, այն էլ անխելք թագավոր, այս խելոք աշխարհի տեր ու զորավոր / ձեռք- ձեռքի տված պարում են ու խնդում աշխարհի վրա/։

Լսվում է երաժշտությունը.

-Աշխարհը մերն ա, մերն ա,

Աշխարհը մերնա,

Ամեն մի մարդ, այս աշխարհի տերն ա՛, տերն ա՛ . . .

Ինչքան էլ ուսուցիչը հարուստ փորձ ունենա, երբեք չպետք է բավարարվի ձեռք բերածով : Ես այդպես եմ կարծում: Ուսուցիչը պարտավոր է անընդհատ կատարելագործել ուսուցման մեթոդներն ու հնարները՝ ցանկալի արդյունքի հասնելու համար: Եթե ուսուցիչը նախապես պատկերացնի տվյալ դասարանի հետ անցնելիք ճանապարհի ուղղությունը, ապա կկարողանա հետաքրքիր դարձնել անգամ հաղթահարվելիք արգելքներն ու դժվարությունները: Դրանով էլ հնարավորինս դյուրին կդառնա 4 տարվա մեր ,,Ճանապարհորդությունը՛՛ …

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կապակցված երևակայան խոսքը, ըստ իս, իրական մոտեցում է կյանքին, շրջապատող աշխարհին: Այստեղից էլ պարզ է դառնում, որ աշակերտը կարողանում է հեշտությամբ գտնել իր տեղը կյանքում: Նա ինքնուրույն պետք է Աստծո ցանած սերմերը կարողանա համապատասխանեցնի իր երևակայությանը, որը իրեն ազատ և անկաշկանդ արտահայտվելու հնարավորություն կտա: Ես գտնում եմ, որ յուրաքանչյուր աշակերտ , ի վերուստ տրված շատ հնարավորություններ չի օգտագործում, ուղեղը չի ծանրաբեռնում: Բայց իմ երկարատև տարիների փորձից ելնելով՝ կարողացել եմ մարդասիրական մոտեցումով բացահայտել բոլորի ներքին հնարավորությունները: Աջակցել եմ, հավանություն տվել յուրաքանչյուրին , որ ազատ արտահայտվեն: Քաջալերել եմ նրանց , որ հավատան իրենց ուժերին՝ հնարավորություններին, կարողություններին ու հմտություններին:

Երևակայական խոսքի զարգացման նպատակով օգտագործում եմ բազմաթիվ մեթոդներ՝ դրանք զուգակցելով և համակցելով իրար: Երևակայական ստեղծագործական խոսքի շարադրանքը ստուգելիս երբեմն հանդիպել եմ այնպիսի անկաշկանդ, աներևակայելի խոսքերի, որ ակամայից ապշել եմ:

Իմ աշակերտները շատ են սիրում հնարովի պատմություններ , հեքիաթներ հորինել, ակրոստիքոսներ գրել: Այսպիսի դեպքերում անպայման խրախուսիչ խոսքեր եմ շռայլում:

- Ապրե՛ս, ես գիտեի , որ դու ամեն ինչ կարող ես:
- Դու, իրոք, իսկականի ստեղծագործող ես:
- Երևակայությունդ աննման է , շարունակի՛ր:
- Լավ ստեղծագործական միտք ունես. . . և այլն. . .

Ուստի անհրաժեշտ եմ համարում , որ ուսուցիչը պետք է լինի պրպտող, հետազոտող, որպեսզի անընդհատ թարմացնի իր գիտելիքները և ընդլայնի իմացության մակարդակը:

Գտնում եմ, որ ուսուցիչը պետք է այնպես կառուցի դասերը , որ դրանք կաթիլ առ կաթիլ նպաստեն աշակերտների գիտելիքների զարգացմանը ։

Փորձել եմ հնարավորինս բացահայտել նրանց ստեղծագործական ներուժը , խորացնել հետաքրքրությունների շրջանակը, թույլ չտալ, որ խաթարվի նրանց վառ երևակայությունը, ստեղծագործական միտքը։

Օգտագործված գրականություն

1. В.И.Андреев- ,,Педагогика творческого саморазвития,,

2. А.В.Петровский- ,,Психология,,

3. Л.Ф.Обухова - ,,Детская психология,, -1996г.

4. Նախաշավիղ- 2. 2016թ. - <<Թեմատիկ ուսուցման արդյունավետությունը >>, էջ 34

5. Ջանի Ռոդարի- <<Ստեղծագործական երևակայության քերականություն>>, 1995թ.

6. Էդվարդ Դե Բոնո - <<Ոչ շաբլոն մտածողության մասին>>,- 1982թ.

7. Նախաշավիղ- Կապակցված խոսքի ուսուցումն ըստ Ջանի Ռոդարիի

8. Խ.Վ. Գասպարյան- Բժշկական հոգեբանության ուսումնական ձեռնարկ

,, Հետաքրքիր փաստ երևակայության մասին,,